ԼՈՒՍ.

ՇԱԲԱԹ—ՇԱԲԱԹԻ ՀԵՏԵՎԻՑ

Անցած շաբաթ Լեռնային Ղարաբաղում ծայրաստիճան լարված դրություն էր տիրում. հաճախակի էին դարձել պրովոկացիոն գործողությունների դեպքերը, որոնք արել էին ռեգիոնի առանց այն էլ դարդ իրադրությունը: Աղդամի շրջանի Շոբլանլի ադրբեջանական գյուղից մեծաքիվ ամբոխ՝ հրազենով, մահակներով ու քարերով զինված, նոյեմբերի 23-ին հարձակվել էր Մարտակերտի շրջանի 22-րդ կուսհամագումարի անվան խորհրդատեսության շուրջ հայ աշխատողների վրա: Ելուզակները դանի կերպով իրենց հետ տարել էին ինքնապաշտպանության դիմած երկու աշխատողների և վիրավորել մյուսներին: Դրան ի պատասխան շրջկենտրոնի մի խումբ բնակիչներ պատանդ են վերցրել Մարտակերտի շրջանի Մանիտլու գյուղից չորս ադրբեջանցիների: Դրանով մարդկանց առևանգումները չեն դադարել: Նույն օրը ուշ երեկոյան Մարտակերտի շրջանի Խաբրմբեյլի և Օրթափայա ադրբեջանական գյուղերի միջև ընկած տարածքում բռնել են երկու հայ վարորդների ու տարել հարևան Աղդամի շրջան: Երկու կողմերը միայն հաջորդ օրն են բաց թողել պատանդներին: Նույն օրը՝ նոյեմբերի 23-ին Մարտակերտի շրջանում գնդակոծվել է մի ավտոմեքենա, որի հետևանքով վարորդը՝ Ռազմիկ Հարությունյանը կրծքավանդակի մասում վերք է ստացել և տեղափոխվել է ճիվանդանոց:

Այդ օրը, որը, դժբախտաբար, առատ էր պատահարներով, Շուշիի շրջանում ադրբեջանցիները կանգնեցրել են յոթ ավտոմեքենաներից բաղկացած շարասյուն, որը Բերդաձոր հայկական գյուղից մասնավոր անասուններ էր տեղափոխում Ստեփանակերտի մսի կոմբինատ: Չնայած որ շարասյունը ուղեկցում էին զինծառայողներ, ամբոխը շարդել է մեքենաները, խլել անասուններն ու քշել-տարել Շուշիի շրջանային ագրոարդյունաբերական միավորում: Ընդ որում, երկու գյուղացիների մարմնական վնասվածքներ են հասցրել:

Լարվածության սման առիթ են ծառայել նաև Բաքվից և հանրապետության ուրիշ շրջաններից ստացված տագնապալի լուրերը, որտեղ հայ բնակչություն է ապրում: Այսպես, մեծ արդեն քանիերորդ անգամ Ադրբեջանում ազգամիջյան իրավիճակի սման վկաներն են դառնում, ինչը որպես կանոն ըստ ժամանակի համընկնում է Ղարաբաղի հարցի նախատեսվող քննարկման հետ: Մարդիկ արդարև հարց են տալիս. մինչև ե՞րբ պետք է հաշվի նստեն կենտրոնական իշխանությունների վրա գործադրվող ուժային ճնշման քաղաքականության հետ, որն ուղղակի սպառնում է հանրապետության հայ բնակչության կյանքին:

Մինչդեռ արցախցիները, որոնք դեռ անցյալ տարվա փետրվարին, հաղթահարելով շատ խոչընդոտներ, միանշանակ վճիռ կայացրին, շարունակում են սերտ կապեր հաստատել հայրենակիցների հետ:

Որոշվել է դեկտեմբերի 2-ին անցկացնել համաքաղաքային շաբաթօրյակ, իսկ դեկտեմբերի 7-ը հայտարարել սգո օր:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ